**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

---

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԸ ՄԱՍԱՄԲ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 1 հուլիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Ռոբերտ Սուքիասյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**ՊԱՐԶԵՑ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Ռոբերտ Սուքիասյանը 14.06.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի, 31-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության առաջին նախադասության համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես, վերջինիս 1-ին, 3-րդ, 6-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ սույն դիմումը մասամբ՝ նշված օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 36-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասության մասով, ակնհայտ անհիմն է, քանի որ դիմողն իրավաբանորեն պատշաճ չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթների միջեւ անմիջական

պատճառահետեւանքային կապի ուղղակի առկայությունը /ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 8-րդ եւ 9-րդ կետեր/:

Բացի դրանից, դիմողի բացատրությունները՝ վերը մատնանշված իրավադրույթների մասով, ըստ էության, կրում են ձեւական բնույթ եւ նպատակ ունեն սոսկ ապահովել դիմումի ընդունելիությունը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի առումով սույն անհատական դիմումի քննությունը մերժելու՝ օրենքով սահմանված հիմքերը բացակայում են, քանի որ դիմողի կողմից պահպանվել են ՀՀ սահմանադրական դատարան դիմելու համար օրենքով նախատեսված ընդունելիության բոլոր պայմանները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 6-րդ կետով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**ՈՐՈՇԵՑ.**

1. Քաղաքացի Ռոբերտ Սուքիասյանի անհատական դիմումով գործը՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի մասով ընդունել քննության:
2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:
3. Տվյալ անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության առաջին նախադասության մասով մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

1 հուլիսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-22